

2021թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 125-րդ հոդվածի և ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի 2008թ. մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի 49-րդ կետի պահանջները՝ ներկայացնում ենք 2021թ. ընթացքում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից բացահայտված էական փաստերն ու տեղեկությունները, և միաժամանակ հաստատում ենք, որ սույն հաշվետվության մեջ ներառված փաստերն ու տեղեկությունները հավաստի և լիարժեք են ու չեն պարունակում այնպիսի բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել տվյալ փաստաթղթի իմաստն ու ամբողջականությունը:

Տեղեկացնում ենք, որ նշված նյութերը հրապարակվել են նաև Բանկի ինտերնետային կայքում՝ հետևյալ հղումով.

<https://www.acba.am/hy/announcements/invest-1637070599>

Առդիր 12 էջ:

Հակոբ Անդրեասյան

(անուն, ազգանուն)

Գլխավոր
գործադիր տնօրեն

(պաշտոն)



(ստորագրություն)

(ամսաթիվ)

05/05/22

Էական փաստեր և տեղեկություններ Ջբաշխված շահույթի հաշվին Բանկի կանոնադրական կապիտալը համալրելու մասին:

Սույնով տեղեկացնում ենք, որ համաձայն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի 25.02.2021թ. Խորհրդի թիվ 121-3.4 որոշման Բանկի Խորհրդի կողմից որոշում է կայացվել.

- Բանկի նախորդ տարիներ չբաշխված շահույթից 20(քսան) միլիարդ ՀՀ դրամն ուղղել Բանկի կանոնադրական կապիտալի ավելացմանը՝ այն դարձնելով 50 (հիսուն) միլիարդ ՀՀ դրամ:
- Բանկի կանոնադրական կապիտալի ավելացումն իրականացնել Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման հաշվին, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը սահմանելով 10 000(տաս հազար) ՀՀ դրամ:
- Բանկի կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ նախորդ տարիների չբաշխված շահույթից 3 (երեք) միլիարդ ՀՀ դրամ ուղղել Բանկի պահուստային հիմնադրամին(Գլխավոր պահուստին)՝ այն դարձնելով 7.5 մլրդ. (յոթ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

Էական փաստեր և տեղեկություններ **Նոր բաժնետոմսեր տեղաբաշխելու մասին:**

Սույնով տեղեկացնում ենք, որ համաձայն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի 25.02.2021թ. Խորհրդի թիվ 121-3.5 որոշման Բանկի խորհրդի կողմից որոշում է կայացվել.

- Բանկի կանոնադրական կապիտալն ավելացնելու նպատակով տեղաբաշխել լրացուցիչ 500 000 (հինգ հարյուր հազար) հատ, 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, հասարակ (սովորական) բաժնետոմսեր՝ ձեռքբերման դիմաց դրամային վճարման եղանակով:
- Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացնել Խորհրդի նիստի սույն արձանագրության 121-3.4 որոշմամբ նախատեսված կանոնադրական կապիտալի ավելացումից հետո, մինչև 31.12.2021թ.-ն՝ Ֆինանսական գծով Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի հսկողությամբ, դրամային վճարման եղանակով:

Էական փաստեր և տեղեկություններ Բանկի բաժնետերերի 2021թ. տարեկան ընդհանուր ժողով գումարելու մասին:

Սույնով տեղեկացնում ենք, որ համաձայն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի 25.02.2021թ. Խորհրդի թիվ 121-3.6 որոշման Բանկի խորհրդի կողմից որոշում է կայացվել.

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողով գումարել 2021թ. ապրիլի 30-ին, ժամը 12:00-ին, տեսակապի միջոցով:

Սույնով տեղեկացնում ենք, որ 2021 թվականի հունիսի 1-ից մինչև 2021 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ հրապարակային առաջարկի միջոցով նախատեսում է տեղաբաշխել անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր՝ հետևյալ պայմաններով.

Դասը	Անվանական արժեկտրոնային
Անվանական արժեքը	100 000 ՀՀ դրամ , 100 ԱՄՆ դոլար,
Ընդհանուր ծավալը	2 000 000 000 ՀՀ դրամ 3 000 000 ԱՄՆ դոլար,
Քանակը	20 000 հատ, 30 000 հատ
Շրջանառության ժամկետը	24 ամիս, 30 ամիս,
Թողարկման ամսաթիվ	01 հունիս 2021թ.
Մարման ամսաթիվ	01 հունիս 2023թ., 01 դեկտեմբեր 2023թ.
Արժեկտրոնային տոկոսադրույքը	9.50% ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում, 4.10% ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում,
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	6 ամիս պարբերականությամբ
Տեղաբաշխող	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ պարտատոմսերի Ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2021թ. մայիսի 7-ի Թիվ N 1/268Ա որոշմամբ (ուժի մեջ է մայիսի 8-ից):

Սույնով տեղեկացնում ենք, որ 2021թ.-ի մայիսի 13-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ Գործադիր մարմնի կողմից հաստատված AMACBAB26ER9 թողարկման դոլարային պարտատոմսերի և AMACBAB27ER7 թողարկման դրամային պարտատոմսերի վերջնական պայմանների 2.1. կետում արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը սխալմամբ մուտքագրվել է 01 դեկտեմբեր 2021թ.՝ **01 հունիս 2021թ.-ի** փոխարեն:

Այսպիսով հավաստում ենք, որ վերոնշյալ պարտատոմսերի դեպքում՝ որպես արժեկտրոնի հաշվարկման առաջին օր, հիմք է ընդունվում **01 հունիսի 2021թ.:**

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի հուլիսի 9-ին «ԱԿՐԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն դիմել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, Բանկի՝ AMACBAB26ER9 թողարկման, դոլարային պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայի պարտատոմսերի երկրորդային շուկայի Bbond հարթակում ցուցակելու նպատակով:

Տեղեկացնում ենք, որ 2021թ. հուլիսի 12-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն ամբողջությամբ մարել է 2018թ.-ի հուլիսի 12-ին թողարկված **AMACBAB23ER6** թողարկման կորպորատիվ դոլարային պարտատոմսերը: Ինչպես նաև վերոնշյալ պարտատոմսերի գծով կատարվել է վերջին՝ վեցերորդ արժեկտրոնի վճարում՝ անվանական արժեքի 2.625% չափով:

Հարկ է նշել նաև, որ շրջանառության ժամկետը լրանալու և մարվելու հիմքով, վերոնշյալ պարտատոմսերն ապացուցակվել են նաև Հայաստանի ֆոնդային բորսաի Abond ցուցակից:

Ընդհանուր մարված պարտատոմսերի անվանական արժեքը կազմել է 2,754,700 ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի օգոստոսի 24-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն դիմել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, Բանկի՝ AMACBAB27ER7 թողարկման դրամային պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայի պարտատոմսերի երկրորդային շուկայի Bbond հարթակում ցուցակելու նպատակով:

Սույնով տեղեկացնում ենք, որ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 13.08.2021թ. թիվ 1/440Ա որոշման համաձայն գրանցվել են Բանկի «Գարաժ մոլ» մասնաճյուղը:

Գրանցմանը կհաջորդի նաև մասնաճյուղի պաշտոնական բացումը:

«Գարաժ մոլ» մասնաճյուղը գործելու է ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Մ. Մազմանյան փողոց 1 հասցեում:

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի նոյեմբերի 12-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն դիմել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, Բանկի՝ AMACBAS10ER7 թողարկման սովորական (հասարակ) բաժնետոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում ցուցակելու նպատակով:

Էական փաստեր և տեղեկություններ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ:

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի դեկտեմբերի 7-ին գումարվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը: Արտահերթ ընդհանուր ժողովը գումարվել է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի CDA online հավելվածով էլեկտրոնային քվեարկության միջոցով:

Ժողովի կողմից կայացվել են հետևյալ որոշումները.

1. Բանկում ստեղծել հաշվիչ հանձնաժողով:

Բանկում հաշվիչ հանձնաժողով ստեղծելու պահանջը պայմանավորված է օրենսդրական կարգավորումներով:

Մասնավորապես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի համաձայն՝ 50-ից ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով, որի քանակական կազմը և անդամները, ինչպես նաև լիազորությունների ժամկետը սահմանվում են ժողովի որոշմամբ՝ խորհրդի ներկայացմամբ:

Ներկայացվեց, որ առաջարկվում է Բանկում ստեղծել հաշվիչ հանձնաժողով՝ բաղկացած 3 անդամից և հանձնաժողովի կազմում նշանակել հետևյալ անձանց.

- **Նարեկ Արայիկի Անտոնյան** - Բանկի Կորպորատիվ իրավական բաժնի պետ, Բանկի Կորպորատիվ քարտուղար
- **Տաթևիկ Իգիթյան** - Բանկի Կորպորատիվ իրավական բաժնի իրավաբան
- **Սիրանուշ Հարությունյան** - Բանկի Ակտիվների և պասիվների կառավարման բաժնի Դիրեկտիվի բեք օֆիսի թիմ լիդեր

2. Հաստատել Բանկի կողմից լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները:

Բանկը ս.թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին հաջողությամբ իրականացրեց լրացուցիչ թողարկված 500,000 հատ բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումը: Տեղաբաշխման արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը կավելանա 5 միլիարդ ՀՀ դրամով:

3. Հաստատել Բանկի կանոնադրության մեջ առաջարկվող փոփոխությունները, հաստատել կանոնադրության նոր խմբագրությունը և ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկ գրանցման:

Համաձայն կանոնադրության նոր խմբագրության՝ Բանկի կանոնադրական կապիտալը 50 (հիսուն) միլիարդ ՀՀ դրամի փոխարեն կկազմի 55 (հիսունհինգ) միլիարդ ՀՀ դրամ):

4. Կատարել փոփոխություն Բանկի խորհրդի կազմում:

Բանկի նշանակալից մասնակից «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ Խորհրդի կողմից 19/11/2021թ.-ին որոշում է կայացվել վաղաժամկետ դադարեցնել Մարաթ Մելիքսեթի Հարությունյանի լիազորությունները Բանկի խորհրդի կազմում և վերջինիս փոխարեն առանց ընտրության Բանկի խորհրդի անդամ նշանակել Ռաֆայել Երվանդի Սարգսյանին:

Նշված փոփոխությունը պայմանավորված է Բանկի կողմից իր կորպորատիվ կառավարման համակարգն ուժեղացնելու, և հատկապես, պրոֆեսիոնալ Խորհուրդ ձևավորելու հանձնառությամբ:

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21³ հոդվածի 2-րդ կետի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Խորհրդի կազմում նշված փոփոխությունն իրականացվում է առանց Բանկի ընդհանուր ժողովի կողմից ընտրության:

Քվեարկության արդյունքներն ամփոփվել են 08 դեկտեմբերի 2021թ., ժամը 15:00-ին:

Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվել է 08 դեկտեմբերի 2021թ., քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո: